ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Զուլո» ժողովրդական երգի տարբերակների համեմատական վերլուծության օրինակի հիման վրա)

ՆՈՒՆԵ ԱԹԱՆԱՍՅԱՆ

Ժողովրդական երգն ու բանահյուսությունը ժողովրդի կենսակերպի կարևոր մասն են կազմել բոլոր ժամանակներում: Գեղարվեստորեն արտացոլելով ժողովրդի կենցաղը, ավանդությունը, նրա վերաբերմունքը պատմական իրադարձություններին, ճաշակը, լեզվամտածողության առանձնահատկությունները՝ ֆոլկլորը հստակորեն բնորոշում է այդ մշակույթը կրող ժողովրդին:

Հայ երաժշտական մշակույթի զարգացման համար բացառիկ նշանակություն ունեցան ժողովրդի հիշողության մեջ պահպանված ժողովրդական երաժշտական գանձերը, որոնց ձայնագրման ու մշակման գործընթացը սկսվեց XIX դարի 80-90-ական թվականներին և նոր թափ առավ XX դարի ամբողջ ընթացքում:

Երաժշտական ֆոլկլորագիտության հիմքում ընկած են ավանդական ժողովրդական ստեղծագործության հավաքման, ուսումնասիրման խնդիրները, որոնց արդյունքում բացահայտվում են ազգային մտածողությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկությունները. սրանք իրենց հերթին բնութագրում են ժողովրդի ստեղծագործական ուրույն դեմքը:

Երաժշտական ֆոլկլորագիտական ուսումնասիրության նյութն են ժողովրդական երգերը, երգվող հատվածներ պարունակող վիպական պատումները, պարերը, գործիքային նվագները և այլն: Դրանց ուսումնասիրման գործընթացը կայացնելու համար առաջնահերթ են հավաքչական աշխատանքները, որոնք ֆոլկլորագիտության առաջին ու կարևորագույն փուլն են:

Հայտնի է, որ ֆոլկլորի կենցաղավարման ձևը բանավոր ավանդույթն է: Ժողովրդական ստեղծագործությունը չունի և չի կարող ունենալ որևէ որոշակի միանշանակ գրառված տեքստ (մեղեդային և բառային), ինչով բնորոշվում է պրոֆեսիոնալ երաժշտությունը: Ժողովրդական երգարվեստը գոյություն ունի միայն գեղջուկի գիտակցության և ենթագիտակցության մեջ, նա հիշողությամբ

վերարտադրում է երգը և նորովի կատարելով այն՝ իր մեկնաբանությամբ, կատարողական արվեստով և զգացմունքներով նոր երանգ և հմայք է հաղորդում դրան՝ բազմապատկելով երգի տարբերակները: Այսինքն՝ ամեն անգամ երգը ստանում է ուրույն կերպարանք՝ կապված կատարողի ճաշակի, իմացության, ձայնային տվյալների, տրամադրության, կատարման իրավիճակի հետ: Եթե դրան ավելացնենք նաև տարբեր վայրերի երգեցողական ավանդույթի, մեղեդիական և ռիթմական մտածողության յուրահատկությունները, ապա հասկանալի կդառնա ֆոլկլորի տարբերակային հարստությունը: Ինչպես գիտենք, ֆոլկլորի հատկանիշներից մեկը՝ տարբերակայնությունը, բխում է բանավոր բնույթից: Ստացվում է, որ ֆոլկլորում նույն երգային տիպի տարբերակների թիվը գործնականում անսահման է՝ որքան կատարում, այնքան էլ տարբերակ: Ուրեմն, տվյալ երգային տիպի մասին լիարժեք պատկերացում ստանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել որքան կարելի է շատ տեղային և ժամանակային տարբերակներ: Հիշենք, որ ժամանակային են կոչվում նույն երգասացից տարբեր ժամանակներում գրի առնված տարբերակները, իսկ տեղային տարբերակները կապված են նույն երգատեսակի տարբեր վայրերից գրառումների հետ:

Ժողովրդական երգի տարբերակները հավասարապես արժեքավոր են, սակայն դրանք տարբերվում են գեղարվեստական ճաշակով:

Մեր հոդվածում փորձել ենք պարզել, թե ինչպես են ստեղծվում նոր երգեր, ինչպես են հները հարստացվում նոր տեքստերով կամ մեղեդիով, որ տարածաշրջաններն են ավելի ակտիվ մասնակցում երգաստեղծության գործընթացին և ինչու: Այս հարցերի պատասխանները ստանալու համար նախ և առաջ կատարել ենք համեմատական դիտարկումներ:

Հետազոտման համար ընտրվել են այն ժողովածուները, որոնք ներկայացնում են XIX դարի վերջի և XX դարի սկզբի երաժշտական ավանդույթը: Այս ժամանակաշրջանում ժողովրդական երգերը ստեղծված են իրենց բնական միջավայրում, արտացոլում են գեղջուկի կենցաղը, ապրելակերպը, հարազատ տարածաշրջանի բնույթը: Այդ իսկ պատճառով սրանք առավել հավաստիորեն են բնորոշում բուն հայ ժողովրդական գեղջկական երաժշտական ստեղծագործությունը[1]:

---

[1] Համեմատության ոլորտ են ներգրավվել հետևյալ ժողովածուները. **Կոմիտաս**, Ազգագրական ժողովածու, 9-14 հատորներ, **Արշակ Բրուտյան**, Ռամկական մրմունջներ, **Սահակ Ամատունի**, Ժողովրդական երգերի ձայնագրյալ ժողովածու, անտիպ, **Ալինա**

Ուսումնասիրելով այդ ժամանակաշրջանում կենցաղավարող երգերը դուրս ենք բերել այն տարբերակները, որոնք հանդիպել են վերոհիշյալ ժողովածուներում:

Ստեփան Դեմուրյանի՝ մեր կողմից հրատարակված «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» ժողովածուի ծանոթագրություններում նշել ենք տվյալ երգի մի շարք տարբերակներ, որոնք հանդիպել են այլ ժողովածուներում: Այդ շարքում ընդգրկել ենք երգեր, որոնք հիշեցնում են դեմուրյանական տարբերակը՝ վերնագրով, տեքստի առաջին տողով, նպատակ ունենալով համեմատական նյութ տրամադրել ուսումնասիրողներին՝ վերլուծական աշխատանքներ կատարելու համար: Մեր նշած տարբերակների շարքում կան նմուշներ, որոնք միայն հեռավոր կապ ունեն Դեմուրյանի գրառած երգի հետ, սակայն դրանք օգտակար նյութ կարող են դառնալ հիմնական երգատիպի տարբերակային հնարավորությունների բացահայտման, ժողովրդական ստեղծագործական մտքի ուղին հասկանալու համար: Ստորև ներկայացնում ենք «Զուլո» երգի մի շարք տարբերակների դիտարկումները: Երգի ընտրությունը հիմնված է այս երգի մեծ ժողովրդականության վրա. այս երգի բազում տարբերակներ գտանք մի քանի ժողովրդական երգերի ժողովածուներում:

«Զուլո» երգի երեք տարբերակ գտնում ենք Սպ. Մելիքյանի «Հայ ժողովրդական երգեր և պարեր» երկհատորյակում և մեկ տարբերակ Ա. Բրուտյանի «Ռամկական մրմունջներ» ժողովածուում: Այս ընտրված տարբերակներն առավել ընդհանրություններ ունեն իրար հետ:

Դեմուրյանի ժողովածուում ներկայացված է երգի միայն մեկ (առաջին) տունը: Սակայն Մարգարիտ Բրուտյանի ձեռագրով Դեմուրյանի արխիվում պահվող տետրակում ավելացված է ևս հինգ տուն. ընդ որում բերված տներից երկրորդ տունը թերի է, խաղիկի երեք տողերից բերված է միայն երկուսը:

«Զուլո» երգը Դեմուրյանը գրառել է Էջմիածնի գավառի Մարգարա գյուղում (այժմ՝ ՀՀ Արմավիրի մարզի Դալարիկ գյուղ):

Երգն ունի գեղեցիկ, ցայտուն մեղեդի և յուրատեսակ ռիթմական պատ-

Փահլևանյան, **Արուսյակ Սահակյան**, Թալին, **Սպիրիդոն Մելիքյան**, Վանա երգեր (1, 2 հ.), Շիրակի երգեր, Հայկական ժողովրդական երգեր և պարեր (1, 2 հ.), **Հակոբ Հարությունյան**, Մանյակ. ժողովածու հայ ժողովրդական երգերի, **Միհրան Թումանան**, Հայրենի երգ ու բան (4-րդ հ.), **Հովհաննես - Մկրտիչ Սարգսյան** (Մգրո), Տաղք Հայրենյաց, **Ալինա Փահլևանյան**, Հայրենի երգեր, **Ստեփան Դեմուրյան**, Քնար, Հայ ժողովրդական երգեր և նվագներ:

կեր. ի դեպ, այստեղ և մյուս բոլոր տարբերակներում երգը գրառված է 6/8 չափով և ռիթմական պատկերի նմանությամբ, չնայած նրան, որ տարբերակների ձայնակարգային ոլորտները տարբեր են:

Սա. Դեմուրյան, Հայ ժողովրդական երգեր և նվագներ, №2 «Զուլո», էջ 15:

Չի կրկնվում նաև բանաստեղծական տեքստը: Բացառություն են կազմում Դեմուրյանի և Սպ. Մելիքյանի երկրորդ հատորում զետեղված տարբերակների առաջին և երկրորդ տողերը.

Արևն ելավ կամար, կամար,

Զուլոն կապեց ոսկե քամար:

Դեմուրյանական տարբերակի պարբերության կառույցը հետևյալն է՝ 6(2+2+2)+4(2+2): Այստեղ առաջին վեց տակտերում երգվում է խաղիկը, իսկ հետագա 4–ում՝ կրկնակը: Երգը ծավալվում է էոլական ձայնակարգում, տերցիային օժանդակ հենակետով: Սկզբի չորս տակտերում երգը զարգանում է օժանդակ հենակետից (սի բեմոլ) վերև, ինչի շնորհիվ երգը հնչում է անգեմիտոն, մաժոր երանգ ունեցող ձայնակարգում: Միայն հետագա շարադրանքի ընթացքում (սոլ) վերջնաձայնի շնորհիվ երգը ձեռք է բերում էոլական երանգ:



Այս լադային փոփոխությունը հստակ ընկալվում է երգի կատարման ժամանակ և յուրօրինակ երանգ է հաղորդում մեղեդուն և այս երգատիպին բնորոշ ինտոնացիոն տեսակ է ձևավորում:

Երգի տեքստի կառույցը հետևյալն է. խաղիկի երեք տողերից յուրաքանչյուրում կա ութ վանկ, իսկ հաջորդ երկու տողը կրկնակն է, որի յուրաքանչյուր տողը բաղկացած է նույնպես ութ վանկից.

3 (8+8+8) + 2(8+8):

Մեղեդու վերլուծության ընթացքում նկատեցինք, որ խաղիկի երկրորդ և երրորդ տողերի մեղեդին, մի փոքր տարբերակվելով, կրկնվում է կրկնակի առաջին և երկրորդ տողերում: Եթե մեղեդին բաժանենք ֆրազների, որոնք բաղկացած են երկու տակտից, կստանանք հետևյալ պատկերը.

a + b + c + b + c

Համեմատելով տեքստը և մեղեդին՝ նկատում ենք, որ երգը սկսվում է ինտոնացիոն բարձրակետից, որին հաջորդում է մեղեդու վարընթաց շարժումը: Երգի երկրորդ և երրորդ տողերի տեքստը փոփոխվում է ամեն տան մեջ, սակայն հաջորդող կրկնակը կատարվում է խաղիկի տարբերակված մեղեդու հետ անփոփոխ:

«Զուլոն» պարերգ է, սակայն դեմուրյանական տարբերակի հարուստ ռիթմիկ պատկերը թելադրում է չափավոր կամ ծանր պարի ուղեկցում, որտեղ յուրաքանչյուր տակտին համապատասխանում է երկու պարաքայլ:

Ինչպես արդեն նշեցինք, միայն Սպ. Մելիքյանի երկրորդ հատորի N 167 (էջ 81) տարբերակն ունի նմանատիպ սկզբնատող, որը ներկայացնում է հանրահայտ «Զուլո» երգի տարբերակը:

Սպ. Մելիքյան «Հայ ժողովրդական երգեր և պարեր», հII, № 167 «Զուլո», էջ 81:



Այս նմուշը Սպ. Մելիքյանը ձայնագրել է Ստեփանավանի գյուղերից մեկում 1926 թ.: Ծանոթագրություններում նա գրում է, որ երգը երգչախմբի համար մշակել է Անտոն Մայիլյանը: Բանահավաքը մատնանշում է նաև այս երգի մյուս տարբերակը՝ իր կազմած ժողովածուի առաջին հատորի N 191 (էջ 149) երգը:

Սպ. Մելիքյան«Հայ ժողովրդական երգեր և պարերգեր», հI, № 191 «Զուլա», էջ 149:



Երկրորդ հատորում հետագայում մշակված և հանրահայտ դարձած տարբերակը նույնպես գրառված է 6/8 չափով, սակայն այս մեղեդին խիստ տարբերվում է դեմուրյանական օրինակից:

Այս երգի կառույցն ունի հետևյալ սխեման.

3 (տակտ) + 3 + 5 + (2 + 2 + 2 + 3)

3 + 3 + 5 + 2 + 2 + 2 + 3

Այսպիսի ռիթմական տատանումների պատճառով հավանաբար պարաքայլերը փոփոխական բնույթ են կրում: Այս պարերգին բնորոշ են բանավոր փոխանցման հետևանքով ի հայտ եկած փոփոխություններ, որոնք այս երգին հաղորդում են քնարական ժանրի երգերին բնորոշ լայնացումներ: Կարելի է ենթադրել, որ այս տարբերակը պարերգից վերափոխվել է քնարական ժողովրդական երգի, որն արդեն երգվում է առանց պարի ուղեկցության:

Երգի մեղեդային կառուցվածքի տրամաբանությունը նման է դեմուրյանական տարբերակին, մեղեդին հիմնականում զարգանում է «սոլ» ժամանակավոր տոնիկայի շուրջ և միայն վերջին չորս տակտում վարընթաց շարժմամբ հանգում «մի» վերջնաձայնին: Այսպիսով, երգի առաջին հատվածն ընթանում է նույն անգեմիտոն մաժոր երանգ ունեցող ձայնակարգում:



Եվ միայն վերջում դրսևորվում է էոլական մինորը, և «սոլ» ժամանակավոր տոնիկան վերափոխվում է օժանդակ հենակետի:



Սակայն ռիթմամետրական առումով այս երկու նմուշները խիստ տարբերվում են իրարից:

Սպ. Մելիքյանի գրառած մյուս նմուշը (առաջին հատոր, N 191, էջ 149) տարբերվում է վերը դիտարկված երգերից, սակայն ունի բազում ընդհանրություններ Ա. Բրուտյանի «Ռամկական մրմունջներում» զետեղված (N 39, էջ 57) «Զուլո» երգի հետ:



Ինչպես նախորդ տարբերակներում, այս երգի մեղեդին նույնպես սկզբնական հատվածում զարգանում է իոնական ձայնակարգում (այլ ոչ անգեմիտոն, ինչպես նախորդ օրինակներում), «դո» օժանդակ հենակետի շուրջ և միայն վերջում հանգում է «լյա» վերջնաձայնին, ինչի հետևանքով երգը ձեռք է բերում նույն էոլական մինորի երանգը: Ի տարբերություն նախորդ օրինակների՝ այս երգի ծավալն ընդգրկում է վերջնաձայնից ցած գտնվող հնչյուն, այսինքն՝ ձայնակարգը վերածվում է հիպոկառույցի:



Բրուտյանի գրառած նմուշի խաղիկի տեքստը բաղկացած է «նաներ, նաներ, նաներ, նաներ Զուլո» բառերից, և միայն կրկնակի վերջին տողն է բառացի կրկնում դեմուրյանական տարբերակի տողը՝ «սանի գյորդում[2] յանդըմ Զուլո», որ թարգմանաբար նշանակում է՝ «Քեզի տեսա՝ վառա, Զուլո»:

Անդրադառնալով Ստ. Դեմուրյանի ժողովածուի N 29 «Զուլոյի երգը» նմուշին՝ նշենք, որ այս տարբերակի տեքստը նման է Ա. Բրուտյանի գրառած տարբերակին:

Ստ. Դեմուրյան,«Հայ ժողովրդական երգեր և նվագներ», № 29 «Զուլոյի երգը», էջ 28:



Փոփոխական չափ և հարուստ ռիթմական պատկեր ունեցող այս տարբերակը ոչ միայն բառային, այլ նաև մեղեդային նմանություններ ունի Սպ. Մելիքյանի առաջին հատորում զետեղված տարբերակի հետ:

Դիտարկված տարբերակներից այս նմուշը միակն է, որն ունի փոփոխական չափ: Երգն ունի երկրորդ և երրորդ տան տեքստ, սակայն երրորդ տունը թերի է, բացակայում է մեկ տող: Այդ թերությունը հեշտ կլինի վերականգնել մեկ այլ նմանատիպ թափառող խաղիկներից որևէ մեկի օգնությամբ. Դեմուրյանի՝ 2013թ. հրատարակված ժողովածուում զետեղված մեծ քանակությամբ խաղիկներով (69-74 էջերում) կլրացվեն շատ պարերգերի տեքստերը և լիարժեք կդարձնեն դրանք կատարման համար: Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել նաև ֆոլկլորի մեջ հաճախակի հանդիպող մի երևույթ. եթե խաղիկը եռատող է, ապա որևիցե տող, երկու անգամ կրկնելով, այդ խնդիրը վերանում է, և խաղիկը դառնում է քառատող: Այս սկզբունքը կիրառելով այս երգի դեպքում՝ հեշտ կվերականգնվի խաղիկի քառատող կառուցվածքը:

Դեմուրյանը երգի գրանցման վայրը նշել է Ալաշկերտ. ենթադրում ենք, որ այն ձայնագրվել է ծագումով ալաշկերտցի ինֆորմանտից:

Երգի կոտորակված և փոփոխական չափը (5/8, 3/8, 2/8, 3/8) յուրահատուկ հմայք և շարժունակ, կատակային ճոճք է հաղորդում նրան:

Ա. Բրուտյանի «Զուլո» երգի մասին ծանոթագրություններում կարդում ենք. «…Օրինակը ռիթմա-ինտոնացիոն ոլորտում տիպականության հասած այն բազմաթիվ քնարական երգերից է, որոնք սովորաբար ծավալվում են

[2] Դեմուրյանի տարբերակում՝ գյորդըմ:

կվինտային հիմք ունեցող էոլական մինորում (Բ ձայն): Ա. Բրուտյանի ձայնագրած այս երգը, քանի որ մեծ մասով ծավալվում է էոլական մինորի III աստիճանի ոլորտում, ունի մաժոր հնչողություն (մեղեդին թեքվում է դեպի էոլական մինոր վերջին երկու տակտերում): Բնագրում կրկնակը թուրքերեն է՝ «Հավար Զուլո, մաղաթ Զուլո, սանի գյորդըմ յանդըմ Զուլո»: Բովանդակությամբ երգը տեղական-կենցաղային երգի օրինակ է»[3]:

Ինչպես տեսնում ենք, Մ. Բրուտյանի «Զուլո» երգի նկարագիրը բազում նմանություններ ունի նախորդ տարբերակների մեր կատարած դիտարկումների հետ. ուստի կարող ենք ասել, որ «Զուլո» երգատիպի հիմնական բնորոշ հատկություններից է ձայնակարգային կրկնվող պատկերը՝ սկզբում մաժոր երանգ, և միայն վերջում ի հայտ է գալիս էոլական մինոր-տերցիային հիմքով: Նման են դիտարկվող երգերի կրկնակի տեքստերը նույնիսկ Ա. Բրուտյանի տարբերակում, ինչպես տեսանք, նույնն են թուրքերեն բառերը, ինչը փաստորեն հատուկ է «Զուլո» երգի բոլոր գրառված տարբերակներին:

Դիտարկումների ընթացքում բացահայտվում են հայ ժողովրդական երգատիպերի, կարծրատիպերի տեսակներ, որոնք պարբերաբար հանդիպում են տարբեր տարածաշրջանների և ժամանակաշրջանների սահմաններում: Մեծ տարածում գտած ժողովրդական երգերի համեմատական վերլուծությունը հնարավորություն կտա հետևելու այն զարգացումներին և փոփոխություններին, որոնց ենթարկվում է տվյալ երգատիպը: Իրենց հերթին այդ փոփոխությունները հնարավորություն են տալիս բնութագրելու տվյալ տարածաշրջանի և ժամանակաշրջանի լեզվամտածողությունը՝ հնարավորություն տալով ստեղծելու մեր պատկերացումները ժողովրդական երգի տարբերակման մասին, որը բանավոր փոխանցման հետևանքով ձեռք է բերում մի շարք բնորոշ հատկություններ:

Հարկավոր է նմանատիպ վերլուծական աշխատանքներ կատարել ուսումնական ծրագրի շրջանակներում, որի հետևանքով ոչ միայն կխորանան մեր պատկերացումները ժողովրդական բանավոր մշակույթի տարածման և տարբերակման մասին, այլև կձևավորվի ժողովրդական երգի վերլուծման և դիտարկման մի համակարգ, ինչի շնորհիվ երաժշտական ժողովրդական ստեղծագործության ուսումնասիրության խնդիրները կստանան համակարգված ձև և բովանդակություն:

---

[3] **Ա. Բրուտյան,** Ռամկական մրմունջներ, Երևան, 1985, էջ 208-209 (ծանոթագրությունները կազմել է Մ. Բրուտյանը):

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկված է «Զուլո» ժողովրդական երգը, որը հանդիպում է Կոմիտասի, Ա. Բրուտյանի, Սպ. Մելիքյանի և Ստ. Դեմուրյանի ժողովրդական երգերի ժողովածուներում: Այս երգը ներկայացված է բազմաթիվ տարբերակներով, որոնց համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս ներկայացնելու բանավոր փոխանցմամբ նրա տարածման շառավիղը, որի շնորհիվ նա ձեռք է բերում մի շարք մեղեդային, ժանրային, ռիթմաինտոնացիոն և տարածաշրջանային առանձնահատկություններ: Այս համեմատական դիտարկումները հնարավորություն են տալիս դուրս բերելու երգի արքետիպերի տարբերակները, որոնք մեծ տարածում ունեն ժողովրդի մեջ և բանավոր փոխանցման շնորհիվ ձեռք են բերում մի շարք մեղեդային, ռիթմական և նույնիսկ ժանրային տարբերակումներ: Այսպիսի վերլուծական աշխատանքը հնարավորություն կտա դուրս բերելու մի շարք առանձնահատկություններ, որոնք բնորոշում են XIX դարի վերջի և XX դարի սկզբի երաժշտական բանահյուսությունը նկարագրող մշակույթը:

Բանալի բառեր – Ա. Բրուտյան, Սպ. Մելիքյան, Ստ. Դեմուրյան, վերլուծություն, ժողովրդական երգ, տարբերակներ, «Զուլո»:

О РАСПРОСТРАНЕНИИ И ДИФФЕРЕНЦИАЦИИ АРМЯНСКОЙ УСТНОЙ МУЗЫКАЛЬНОЙ КУЛЬТУРЫ
(на примере сравнительного анализа вариантов народной песни “Зуло”)

НУНЕ АТАНАСЯН

Статья представляет музыкальный анализ армянской народной песни “Зуло”, вошедшей в музыкальные этнографические сборники Комитаса, А. Брутяна, Сп. Меликяна, Ст. Демуряна. Песня представлена во многих вариантах, сравнительный анализ которых дает возможность проследить путь распространения данной песни через устное творчество, благодаря чему она приобретает ряд мелодических, жанровых, ритмоинтонационных и региональных особенностей. Помимо сказанного сравнительный анализ позволит выявить типовые варианты архетипов популярных народных песен, которые, передаваясь из уст в уста, претерпевали ряд мелодических, ритмических, ладоинтонационных изменений. Подобный сравнительно-аналитический метод исследования способствует выявлению ряда процессов, характеризующих особенности народного музыкального мышления, характерного для конца 19 – начала 20 вв.

Ключевые слова – А. Брутян, Сп. Меликян, Ст. Демурян, анализ, народные песни, варианты, “Зуло”.

THE PUBLICIZATION & DIFFERENTIATIONS OF ARMENIAN ORAL FOLK MUSIC (ON THE PREMISE OF COMPARATIVE STUD OF THE VARIATIONS OF "ZULO" FOLK SONG)

NUNE ATANASSIAN

The article considers the Armenian folk song "Zulo". This song with its many variations can be found in the ethnomusicological song collections of Komitas, Arshak Brutyan, Spiridon Melikyan, and Stepan Demuryan. The study of the comparison of these variations gives the possibility to follow the track through which the song has been transmitted by oral tradition. Thanks to this transmission the song has acquired a series of melodic, genre, rhythmic, intonational and regional features. This comparative analysis also gives the opportunity to derive archetype variants of the song, which have great popularity with the people and developed with time a series of melodic, rhythmic and modal differentiations. Studies of this type help to discover the typical features that characterize the folk music describing the folk culture of the 19th and the beginning of the 20th centuries.

Key words – A. Brutyan, Sp. Melikyan, St. Demuryan, analysis, folk song, variations, “Zulo”.